

Հ. ՂԵԽՈՆԻ ԱԼԻՇԱՆ. ՄԱՐԴԸ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

ԺԹ. դարասկզբին բարձրացող հայ ազգի հոգեւոր պահանջների եւ հայկական գաղափարաբանութեան ստեղծման ճանապարհին անգնահատելի էր Մխիթարեանների կատարած գրականպատմական գերը: «Ամենից առաջ Յրանք՝ այդ բանասէր, լեզուագէտ, աշխարհագէտ, պատմաբան գիտնականները, օժուած նաև գրական ձիրքով, հարկ համարեցին իրենց գործն սկսել անցեալի Վերակենդանցումից: Նրանք դարերի փոշիների միջից հանցին, խմբագրեցին, ծանօթագրեցին եւ ընթերցողի առջեւ դրեցին հայ ողջ դպրութիւնը, պատմագրութիւնը, մասամբ էլ՝ պօեզիան: Դա վիթխարի լիցք տուեց ժամանակակիցներին, ստացաւ ժամանակակից շեշտ, ջերմացրեց հայ մարդկանց, բորբոքեց անդեկ ու անգլուխ սերնդին»¹, - այսպէս անաշու է գնահատում Մխիթարեանների գերը ակադ. Հր. Թամրագեանը: «Բազմաբիւ էին թէ' հայերը եւ թէ' վենետիկցիները, որոնք օգնեցին Մխիթարին ձեւափոխելու փոքրիկ կըդզին աշխարհում հաւասարը չունեցող մի մենաստանի, որն ի պատիւ Վենետիկի՝ պէտք է դառնար տարագիր ազգի յիշողութիւնների եւ յայսերի սուրբ նստավայրը: Սակայն այն ոչ թէ' յուշերի քանօքարան էր գիտնականների եւ պատմաբանների համար կամ պայծառ պապացայի սպասող անգործութեան մատնուած մի վայր, այլ գիտութեան կենդանի եւ կենսուրախ մի կենտրոն, որն ի վիճակի է ապրեցնել լեզուն, գրականութիւնը, աւանդոյթներն ու սովորոյթները՝ որպէս ցըրուած ազգի միացման բաղադրիչներ»², - իրենց հերթին նկատում են իտալացի գիտնականներ Ալերամոյ Հերմետն ու Պաոլա Կոնի Ծատարի դի Դէզիոն:

ԺԹ. դարի առաջին երեսնամեակն առանձնայատուկ էր հայ գեղարուեստական գրականութեան համար. մի կողմից բուռն զար-

1 ԹԱՄՐԱԶԵԱՆ, ՀՐ., Երկեր, հ. Ա, Երեւան 2006, 727-728:

2 ՀԵՐՄԵՏ ԱԼԵՐԱՄՈՅ, ՌԱՍՏԻ ԴԻ ԴԵԶԻՈ ՊԱԼԱ ԿՈՆԻ, Հայերի Վենետիկ. Տանիկց դար պատմութեան եւ առասպեկի միջով, Երեւան 2000, 235:

գացում էր ապրում կլասիցիզմը՝ զուտ հայկական ինքնօրինակութեամբ (սեփական ազգային անցեալի խոր ընկալում, հայկական գաղափարաբանութեան յատուկ շեշտագրում, մեթոդին բնորոշուրոշ կաշկանդումների անտեսում...), միւս կողմից՝ գրականութիւն էին թափանցում իրական կեանքի ու հոգեբանութեան, աշխարհիկ տրամադրութիւնների անհրաժեշտ անդրադարձները։ Այսինքն՝ կրօնահայրենասիրական ու բարոյախրատական մոտիւններին նոր ժամանակների հարամայականով միախառնըւում էին քնարականն ու մարդկային կենդանի տրամադրութիւնները։ Դանդաղ, բայց հաստատուն ոիթմերով հայոց բանաստեղծութիւն էին թափանցում սենտիմենտալ ու ոոմանտիկական ոճերը. անտիկ՝ յունահռոմէական գրողներին ու եւրոպական կլասիցիստ հեղինակներին զուգահեռ՝ հայ ընթերցողին արդէն թարգմանաբար ներկայացւում էին Շեքսպիրն ու Բայրոնը, Կարամզինն ու Ժուլიետկին, Բեռնարդէն դը Սէն Պիեռը... Եւ բնաւ պատահական չէր, որ երբ 1858-ին լոյս տեսաւ հայկական կլասիցիզմի բարձրագոյն արտայալութիւնը՝ Արսէն Կոմիտաս Բագրատունու «Հայկ Դիւցազն» պօէմը, նոյն թուականին հըրատարակուեց նաեւ Խաչատուր Աբովյեանի «Վէրք Հայաստանի. Ողբ հայրենասիրի»՝ սենտիմենտալիզմի, ոոմանտիզմի ու ռէալիզմի իրօրինակ շաղախով ստեղծուած վէպը։ Ինչպէս իրաւացիօրէն նկատել է Լեւոն Մանուէլեանը, «հայկական միտքը երկնային բարձունելից իշնում է երկիր, վերացականը իր սենյը զիջում է իրականութեան, կրնկրես փաստերին, եւ մարդկային հոգին ազատուում է կապանքից։ Գրական նոր ուղղութիւնը իր հարցափրութեան գըլինաւոր առարկան դարձնում է մարդը, մարդու զգացումը, միտքը եւ կենցաղը»³:

Դեռեւս Խաչատուր Աբովյեանից առաջ գրական հորիզոնի վրայ արդէն բարձրացել էին երկու տաղանդաւոր բանաստեղծներ՝ Յարութիւն Ալամդարեանը եւ Մեսրոպ Թաղիադեանը, որոնք նոր արահետներ բացող առաջամարտիկներ էին։ Նրանց ստեղծագործութեան մէջ ակնյայտօրէն երեւում են կեանքի ու արուեստի առնչակցութեան, ձեւի ու բովանդակութեան ներդաշնակութեան ստեղծման ճանապարհի դժուարութիւնները եւ նախաբռնիանական շրջանի գրական ծանր երկունքը։ Եւ դա բնական էր. նոր կեանքն իր ուրոյն խնդիրներն էր գնում գրականութեան առջեւ, ստիպում գնալ անկոխ ճամփաներով։ Ալամդարեանն ու Թաղիա-

3 ՄԱՆՈՒԵԼԵԱՆ, Լ., Ռուսահայ գրականութեան պատմութիւն, Ա., Ալեքսանդրապոլ 1909, 22-23:

դեանը նոր արահետներ էին փնտրում դէպի ճշմարիտ արուեստը եւ որոնում մայրուղին: Նրանք թէեւ չգարձան հայ նոր գրականութեան դասական ներկայացուցիչներ եւ չկարողացան նախապատրաստողի պատուաւոր դերից բարձրանալ հիմնադրի յաւերժական աստիճանին, բայց եւ անժխտելի է այս երկու ստեղծագործողների կատարած խոչոր գերը հայ մշակոյթի ու հանրային-քաղաքական կեանքի զարգացման ճանապարհին:

Իսկ յետոյ 1850-60-ականների հանրային-քաղաքական յեղաբեկումների ու ազգային զարթօնքի մթնոլորտում ծնուռում է ազգային երգը. պօէզիայի մէջ սկսում են մորմոքել հայրենիքի կարուսը, բոցավառուել հայկական ոգու հուրը, ծայր են առնուռ յուսավառ երազները... Նոր գրականութեան մէջ ձեւաւորւում է ոռմանտիկական տարերքը, եւ բարձրանուռ է խորհող, երազող ու մաքառող հերոսը: Հայ պօէզիան նորից միանում է մարդկութեան համանուագին. Եւրոպական որոշ ժողովուրդների պէս հայերը եւս սկսում են որոնել քաղաքական տիսուր հանգամանքների բերումով ընդհատուած ազատութեան ճանապարհները:

Ղեւոնդ Ալիշանը (1820-1901): Նա վիթխարի հետք է թողել հայ սերունդների հոգեւոր մաքառման ճանապարհին, հերոսական չնչով կամրջել է հայոց անցեալն ու ներկան: Հայաստանը երբեք չտեսած, բայց նրա իւրաքանչիւր ծառ ու թուփ հրաշալի ճանաչող նահապետի պօէզիայից է լիցք ստացել Մկրտիչ Պէշիկթաշլեանը՝ 1860-ականներին հիւսեկով իր «Զէյթունեան» երգերը, այդ պօէզիան վերստին բորբոքուել է յաջորդ դարի սկզբին՝ նոր թափ ստանալով Միամանթոյի ու Գանիէլ Վարուժանի երգերում: «Ալիշանն, Պէշիկթաշլեան, - յետագյում պիտի գրէր Վարուժանը, - երկու մեծ համադրութիւններ... Մէկուն Ոգին, արծուի թևերով Ս. Ղազարին, միւսին Ոգին աղաւելի թոփշներով Միշագիւղէն նամրայ ելան դէպի մայրենի երկիրը, հոն մարտիրոսուած ժողովրդի մը ալեկոծ ովկիանին վրայ զիրար գտան, նաևչցան ու համբուրուեցան: Մերքառած հայրենի կտուրի մը վրայ, աւերակներու լուռ հպարտութիւնը սորվեցուցին մեզի, կամ քեւամփոփ Մասիսի կատարին, հսկայական լերան միարմատ, համանոյլ, սլացիկ եւ միաւոր Ամբողջականութիւնը երգեցին մեզի: Իրենց այդ ե՛րգն էր հայուն փրկութիւնը»⁴:

4 ՎԱՐՈՒԺԱՆ ԴԱՆԻԵԼ, Երկերի լիակատար ժող., Երևան, հ. 3, 1987, 186:

«Հայաստանի բախտի աստղը վենտրող մոգը»⁵, առասպելական աշխատափրութեամբ փայլող գրական այդ մշակը, որն ամէնօրեւայ մեղուածան տքնանքով ստեղծել է շուրջ յիսուն հատորի հասնող գիտական ու գեղարուեստական վիթխարի ժառանգութիւն (բանաստեղծութիւն, արձակ, պատմաաշխարհագրական ուսումնասիրութիւններ, պատմիչների քննական բնագրերի հրատարակութիւն, գիտական բուսաբանութիւն, հայկական հեթանոսութեան եւ նրա հաւատալիքների վերլուծութիւն...), աչքի է ընկել հազուագիւտ համեստութեամբ եւ վայելել համընդհանուր յարդանք ու սէր: Ականատեսներից մէկը՝ Նիկողայոս Քարամեանը, օրինակ, պատմում է, որ Խտալիայի թագուհի Մարգարիտա Սաւոյացին⁶ Վենետիկի Միջիթարեաններին իւրաքանչիւր այցելութեան ժամանակ անչափ զարմանում էր, երբ Դ. Ալիշանից նուէր էր ստանում հերթական ստուարածաւալ հատորը: Մի անգամ, 1887-ի ամռանը, երբ թագուհին պատարագից յետոյ Ս. Ղազարի վանքի ներքին գաւթի պարտէզում վայելում էր վանքում պատրաստուած վարդի մուրաբան, նրան են ընծայում փառակազմ «Սիսուանը». «Թագուհին հարցրեց, թէ ու՞ր է հեղինակը. շուրջը նայեցին եւ տեսան, որ համեստ արեղան արդէն իւր մենարանն է առանձնացել, որտեղից կանչեցին նրան: Թագուհու՝ իւր աշխատանքին տուած գովասանեներին պատասխանել է հայր Ղեւոնդը, թէ իւր աշխատանքը մի փոքրիկ գործ է, այնքան փոքրիկ, որ մըշիւններն ել կարող էին անել, որովհետեւ ինքը մշշմանց նման միայն հաւաքել է եւ կուտակելի⁷: Կամ՝ մէկ ուրիշ անգամ նոյն թագուհու զարմացական հարցմանը պատասխանել է. «Վեհափա՛ն տիկին, իմ աշխատութիւն խաղալիք մ'է, նման անոր, որով կատունները զուարեանան»⁸: Ահա նոյն յիշատակութիւնը՝ ուրիշ ականատեսի վկայաբերութեամբ. ««Վեհափառ դշխոյ, - կը պատասխանէ, - ինչպէս կատուններ, երբ շարժուն բան մը լու տեսնեն՝ անոր հետ կը խաղան իրենց բնագդովը, մենք ալ վարժած

-
- 5 Արսէն Բագրատունու բնորշումն է: Տե՛ս ԵՐԵՄԵԱՆ ՍԻՄՈՆ, Ղեւոնդ Ալիշան, ի «Ալիշանը ժամանակակիցների յուշերում», Աշխատափրութեամբ՝ Ս. Շտիկեանի, Երեւան 1974, 129:
- 6 Խօսքը Խտալիայի թագաւոր Ումբերտոյ Առաջինի (1844-1900) կնոջ՝ Մարգարիտա Մայրի աշխատանքութիւն (1851-1926) մասին է, գարիտա մայր թագուհու՝ Մարգարիտա Սաւոյացու (1851-1926) մասին է, որը բարեկամական ջերմ կապերի մէջ էր Միջիթարեանների հետ եւ հաղորդում էր Ղեւոնդ Ալիշանի մօս:
- 7 ԳԱՐԱՐԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՒՄ, Ղեւոնդ Ալիշան (Մի ժամի թերթ իմ յիշատակարանից), ի «Ալիշանը ժամանակակիցների յուշերում», 40-41:
- 8 ՀԱՅՈՒՆԻ ՎԱՐԴԱՆ, Հայր Ալիշանի հետ, անդ, 178:

ենք տեսակ մը սովորութեամբ գրիչ շարժելու հանդիպած քուղբերու վրայ»։ Այս կ'ըսէ եւ մէկ-երկու վայրկեան շառագունած ոստի վրայ կենալէ ետքը խոնարհարար հրաժեշտ կ'առնէ եւ իսկոյն կը հեռանայ»⁹։ ինչպէս տեսնում ենք, մի կողմից դարձեալ խոր համեստութիւն, միւս կողմից՝ հայրենանուէր աշխատանքի բաւականութեան ու հաճոյքի գգացում։

Նրան սիրել ու ակնածանքով են վերաբերուել նաեւ հայոց գրեթէ բոլոր մեծերը՝ Միք. Նալբանդեանից մինչեւ Ղ. Աղայեան, Ալ. Շիրվանզարից ու Ա. Արփիարեան, Յովհ. Թումանեան եւ Աւ. Խսահակեան։ «90-ական թուականների մեր սերունդի համար նա ամենահայիշ անունն էր. նրա՝ նահապետի սեանչելի բանաստեղծութիւնները՝ «Հրազդան», «Պլպուն Աւարայրի», «Հայոց աշխարհիկ, գարունդ է նկել», մենք անգիր գիտէինք, մեր դասագրքերի զարդն էին նրանք, ոգեւորուած արտասանում էին հանդէսներում։ Ալիշանը եւ ուրիշները վանքում, հին մատենագիրների, մագաղաքների ներշնչումով ստեղծել են մի հոգեկան, գաղափարական Հայաստան եւ ապրում են ու երգում այդ անգոյ հայրենիքում, որպէս իրականութեան մէջ, իրական Հայաստանում։ Հայր Ալիշանը։ նրա ոտները իրական երկրի վրայ էին, իսկ գլուխը՝ հինգերորդ դարում, երազների մէջ։

...Իր հատորների եւ մեր հոգիների մէջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը եւ պատեց մի վիպական, բանաստեղծական մքնուրուով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց եւ իրական։

Հայաստանը ոչ ոք այնպէս չգիտէ, ինչպէս նա, ոչ ոք այնքան չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասէրը։ Իրականութիւնը նրա գրչի տակ երազ էր դարձել, եւ երազը՝ իրականութիւն»¹⁰, - Ալիշանին այսպէս պատկերաւոր է գնահատել 1901-ին Վենետիկ այցելած Աւ. Խսահակեանը։

Ալիշանը գեռեւս կենդանութեան ժամանակ արժանացել է համաեւրոպական ճանաչման. 1886-ին Ֆրանսիայի ակադեմիան նրան շնորհել է «Պատույ լեգէն» շքանշան, 1887-ին ընտրուել է իտալիայի Ասիական ընկերութեան պատուաւոր անդամ, 1894-ին՝ Մոսկուայի հնէաբանութեան ընկերութեան անդամ։ Ալիշանը 1896 թ. դարձել է Պետերբուրգի Հնախօսական ընկերութեան պատուաւոր, իսկ 1897-ին՝ Ենայի փիլիսոփայական ակադեմիայի անդամ-

9 ԹՈՄՍՃԱՆ ԹԱԴԵԽՈՍ, ՅՈՒՂԵԿ, եւ ՑԻՉԵՐ Հ. ՂԵՒՈՆԴ Ալիշանի ներքին կեամբէն, անդ, 203:

10 ԻՍԱՀԱԿԵԱՆ ԱԼԵՏԻՎ, ՂԵՒՈՆԴ Ալիշան, անդ, 218, 220:

Ներ... Նրան չափազանց բարձր են գնահատել հայագիտութեան գրեթէ բոլոր խոշորագոյն ներկայացուցիչները՝ Վինդիշմանը, Դիւրիէն, Հիւբշմանը, Զախառուն, Տեղան, Կարրիերը, Վէսելովսկին, Բրիւսովը եւ շատ ուրիշներու:

Գեւոնդ Ալիշանի մասին ստեղծուել է գրական-բանասիրական պատկառելի ժառանգութիւն. գրել են ե՛ւ նրա ժամանակա-կիցները, ե՛ւ նշանաւոր գրողներ ու մտածողներ, ե՛ւ սկսնակ գրիչներ: Նրա առաջին գնահատողներից են եղել Հայր Ս. Երեմեանն ու Միք. Նալբանդեանը, Յովկ. Թումանեանն ու Աւ. Խսահակեանը, Ղ. Աղայեանն ու Դ. Վարուժանը... Նրան այս կամ այն առիթով՝ յիշել կամ առանձին ուսումնասիրութիւններ են նուիրել Արշակ Չոպանեանն ու Տիգրան Նազարեանը, Արամ Ինճիկեանն ու Սուրէն Շտիկեանը, Հրանտ Թամրազեանը...

Նրան անսահման սիրել են նաեւ հասարակ մարդիկ. բնաշխարհի բազմաթիւ հայորդիներ՝ պարզ ու սովորական մշակներ, որոնք, կտրելով երկար ճամփաներ, մշտապէս այցելել են Ս. Ղազար՝ գոնէ մի անգամ տեսնելու այդ սուրբ մարդուն եւ նրա աջը համբուրելու: «Ես ո՞վ եմ, որ զիս կ'ուզեն տեսնել»¹¹, - նման դէպքերում անկեղծ վրովմունքով միշտ զարմացել է Ղ. Ալիշանը: Համաժողովրդական սիրոյ բնորոշ մի արտայայտութիւն է վաւերական հետեւեալ ազգեցիկ յուշը՝ դարձեալ պատմուած ականատեսի կողմից. «Մուշեղ անունով Սասունցի մի քաջակորով երիտասարդ, տասը տարի առաջ վանձ գալով, ուզեց տեսնել զի. Ալիշան. սա նոյն ատեն ի սեղանատան սուրբ կը խմէր, Մուշեղ հեռուէն զինքը տեսնելով, սկսաւ ծննդուներուն վրայ քալելով մօտենալ հ. Ալիշանին: Յուզիշ տեսարան մ'էր. հ. Ալիշան զայն տեսնելուն՝ կը մօտենայ, վեր կը համէ զաստունցին: Նահապետին աջին վրայ Մուշեղի տաք-տաք համբոյրները կշարունակուին. մեր ծերութին շուարած կը հարցնէ երիտասարդին «Ո՞վ ես, ի՞նչ կ'ուզես». կը պատախանէ. «Սասունցի երիտասարդ մ'եմ, այս ձեռքը համբուրելու համար եկած եմ». Նահապետ իր ձեռքով կը հրամցնէ բաժակ մը սուրբ. Մուշեղ զայն տեսնելուն շուարած կ'ըսէ. «Ի՞նչ կ'ընես, հայր սուրբ, ես քու ծառայութեան արժանի չեմ»¹²:

Ուրիշ խօսքով՝ դեռեւս կենդանութեան օրոք նա ակամայ արդէն բռնել էր յաւէրժի ճանապարհը:

11 ԵՐԵՄԵԱՆ ՍԻՄՈՆ, Ղեւոնդ Ալիշան, ի «Ալիշանը ժամանակակիցների յուշերում», 133:

12 Անդ:

Որ՞ն է այդ սիրոյ գաղտնիքը: Ամէնից առաջ՝ Ալիշան մարդու բարոյական բարձր կեցուածքը, անանձնականութիւնը, հազուագիւտ ձիրքն ու նախաշաւիդ հանդիսացող բանաստեղծական անուրանալի չնորհքը: Հայրենի տնից ու ծննդավայրից, հարազատներից հեռացած այդ պանդուխա հայորդին, զրկուած լինելով ընտանեկան բերկրանքից, հակուած գրչագիր մատեանների վրայ, հեռաւոր վենետիկից անդադրում բորբոքում էր հայկական ոգու հուրը՝ սերմանելով խորունկ սէր գեղեցիկի ու բարու նկատմամբ...

Նա անչափելի հայրենասէր էր: «Ճանաչել եւ պահել անվթար զսեփական շնորհս ազգիս, - յորդորել է Ալիշանը հայ սերունդներին, - զիեզու նորա, զպատմութիւն նորա, զսվորութիւն եւ զախորժակ նորա անվնաս, զիարազաս դպրութիւն նորա եւ զփառս անուան նորա: Զայսպիսի կամիս հայրենասիրութիւն»¹³: Ի դէպ, Նահապետի այս յորդոր-պատգամը՝ ուղղուած իր փոքրաթիւ ազգին, խիստ արդիական է նաև հէնց այսօր՝ «գլորալիզացիա» յորջորջուած այս աղմուկ-աղաղակի խառնաչփոթ իրողութեան մէջ:

Ալիշանը երբեք չի եղել մայր հայրենիքում եւ մշտապէս ապրել է սրտմաշուկ կարօտախոտ: «Միարանութեանս անդամներէն մին, - պատմում է ժամանակակիցը, - Հայաստանէն վանք վերադարձած ատեն, հ. Ալիշան կ'ողջագուրէ զայն եւ առաջին խօսքն կ'ըլլայ «Կօշկնեն՝ րդ, կօշկնեն՝ րդ տուր ինձիք»: Նահապետ կը փափագի նոյն ուղեւորին կօշկները գգուելու, վասնզի անոնք արժանացեր էին Հայաստանի նուիրական հողերը համբուրելու»¹⁴:

Խեկ ինչու՝ երբեւէ չի այցել Հայաստան: Այդ հարցն իրեն տրուել է բազմիցս, եւ միշտ էլ հնչել է երկիմաստ, գրեթէ խուսափողական պատասխանը: Գէորգ Բաշինջաղեանի հարցին, օրինակ, թէ «ինչու Հայաստան չի գնում նամփորդելու», ժպտալով բառախաղով պատասխանել է: «Երուսաղէմ կ'երթամ»¹⁵: Կամ՝ «Ուխտիս ներկայ արքահայրը արեւելք ուղեւորուելու օրը՝ ամբողջ միարանութիւնս ի միասին կ'երթայ մինչեւ շոգենաւ: Ամենքը շոգենաւ կը բարձրանան, սակայն հ. Ալիշան վարը նաւակին մէջ կը մնայ. շ'ուզեր վեր բարձրանալ, ըսելով, որ մի անգամ պատրաստուէր էր հայրենիք երթալու եւ պատճառաւ մը այդ ուղեւորութենէն ես կեցած ըլլալով, շատ

13 «Բազմավեպ», 1848, թիւ 12, 181:

14 ԵՐԵՄԵՆԱՆ ՍԻՄՈՆ, Ղեւոնդ Ալիշան, ի «Ալիշանը ժամանակակիցների յուշերում», 130:

15 ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ ԳԷՈՐԳ, Ա. Ղազար կղզին 1884 թուականին, ի «Ալիշանը ժամանակակիցների յուշերում», 95:

կը ցաւի. եւ նոյն օրէն կ'որոշէ երբեք շոգենաւ չմըսնել»¹⁶. Արդեօ՞ք սոսկ ուշանալու պատճառով՝ հազիւ թէ. գաղտնիքն այլ հարթութեան վրայ է: Կարծում ենք՝ պատճառը կուռքի տապալման սարսափին չդիմանալու մտորումն էր. չէ՞ որ նրա պատկերացրած երկիր դրախտավայրը վաղուց կորցրել էր իր վաղեմի փառքը, իսկ հայրենի եզերքեց էլ շարունակաբար գալիս էին անմիջիթար լուրեր...

Ալիշանը թէեւ իր պօէզիան ամփոփել է «Նուագֆ» ընդհանուր խորագրով 1857-1858 թթ. հրատարակուած հինգ հատորներում («Մանկունի», «Մաղրունի», «Բնունի», «Հայրունի», «Տէրունի», «Տիրունի»), բայց եւ հարկ է խոստովանել, որ միայն «Հայրունի»ում զետեղուած յատկապէս «Երգֆ նահապետի» բանաստեղծական շարքի տասնմէկ աշխարհաբար երգերը («Հայոց աշխարհիկ», «Ողբամ զիեզ Հայոց աշխարհ», «Հրազդան», «Հայ հայրենիք», «Վերջին երգ վիրաւոր բամբոահարին», «Մասիսու սարերն», «Աշուն երկար ի ծովուն Սեւանայ», «Հայ հանճար», «Պլազուն Աւարայրի», «Շուշանն Շաւարշանայ», «Լուսնկայն գերեզմանաց հայոց»), որոնք հեղինակն ստեղծել է 27-30 տարեկանում 1847-1852 թթ., ստեղծեցին գրական դպրոց եւ դարձան գրական-գեղագիտական մի ամբողջ շարժման անկիւնաքար: Ի հակադրութիւն կլասիցիզմի քարացած կանոնների եւ Միսիթարեան տեսաբանների ու հեղինակների (Ծղիա Թովմանեան, Մանուէլ Զախջախեան, Արսէն Բագրատունի եւ այլք) պարտադրած թեմաների՝ աստուածաշնչեան զանազան պատմութիւններ կամ հայոց հեթանոսական շրջանի առասպելներ, առաջին անգամ հայ նոր քնարերգութեան մէջ զրոյց է բացւում իրական, կենդանի Հայաստանի շուրջ, պատկերում է հայոց աւելը տունը, լսում է հայ պանդուխտի սրտառուչ երգը, աշխոյժ երկինոսութեան են բռնւում Մեծ ու Փոքր Մասիսները, խօսում է Աւարայրի սոխակը, ծայր է առնում Շաւարշանի դաշտի շուշանի՝ Սանատրուկ թագաւորի Սանդուխտ դստեր քնքուշ սէրը... «Տեւական հայրենասիրութեան եւ յարատել աշխատութեան այս բարողիչը, հանդարտիկ զերմութիւն պատգամող այս վարպետը, գրում է ակադ. Հր. Թամրազեանը, հազար թելերով կապուած Հայաստանի հետ, ունեցել է նաև իր հրդեհուած, կայծակնող օրերը: Նա աչքը միշտ պահել է մեծ աշխարհին, զերմութիւն է առել նաև եւրոպական ազատագրական հրդեհներից: Հենց հայրենականի եւ համամարդկայինի այդ շփումից էլ ծնուել է գեղարուեստական գիւտը,

բորբոքուել բանաստեղծական հրդեհը, «Հայրունի» գրքի «Երգի Նահապետի» շարքը եւ մի շարք ուրիշ կրակուած բանաստեղծութիւններ»¹⁷:

Դ. Ալիշանի մասին զրոյցը շարունակում է նաեւ այսօր՝ իԱ. դարում, եւ յոբելեանական այս խօսքը հերթական մի փորձ է՝ արժեւորելու հայոց «Անծ պանդուխտի» քնարերգութիւնը, մի անգամ եւս մատնանշելու կենարար այն երակը, որը հսկայական ազդեցութիւն ունեցաւ հայ նոր քնարերգութեան մայրուղու ստեղծման ճանապարհին:

Մեծ կեանքի բովում՝ 1850-60-ականների կենսական շարժման մէջ, հայ առաջադէմ մտաւորականներն աստիճանաբար անցում են կատարում դէպի սոցիալ-քաղաքական խնդիրները, իրենց ասելիքը մարմնաւորելու համար որոնում գրական նորանոր ձեւերծնուում են ֆելիետոններ ու պամֆլետներ, կատակերգութիւններ ու երգիծական բանաստեղծութիւններ՝ յագեցած քաղաքացիական եւ գաղափարական ցայտուն շեշտաւորումներով: Իսկ ամենաբնորոշն այն է, որ յեղաբեկումների ու զարթօնքի մթնոլորտում ծնուում է ազգային երգը՝ պօչզիայի մէջ սկսում է մորմոքել հայ հայրենիքի կարօտը, բոցավառուում է հայկական ոգու հուրբ... Նոր գրականութեան մէջ ձեւաւորուում է ոռմանտիզմը, եւ բարձրանում է նոր հերոս՝ խոհուն, ըմբոստ ու անանձնական: Հայ պօչզիան վերստին միանում է համայն մարդկութեան երգին, հայ մարդկի եւս սկսում են որոնել ազատութեան սեփական ուղիները: Այդ ամէնին մեծապէս նպաստում էին իտալական ազգային-ազատագրական գաղափարախօսութիւնը, յեղափոխական շարժումները: 1848 թ. ֆրանսիական յեղափոխութիւնը բացառիկ հետք թողեց բոլոր ազգերի վրայ. մէկ տարի յետոյ իտալիան տենդագին պայքար էր մղում աւստրիական բռնակալութեան եւ ֆրանսիական քաղաքական ուշակցիայի դէմ: Իսկ դա ոգեւորում էր նաեւ թուրքական լծի տակ հեծող ժողովուրդներին եւ ամէնից առաջ՝ պատմական յիշողութիւնը վառ պահած հայերին: Լէոն նկատում է, որ ԺԹ. դարի 40-ականների վերջերին եւրոպական յեղափոխական շարժումներն ազգել են նաեւ հայ ուսանողների վրայ, որոնք «ունենում են մեր կեանքի արշալոյսը, հասկանում են, որ մի ազգի զաւակներ են, որ այդ ազգը ոչինչ չունի, ո՛չ զգացմունք, ո՛չ գաղափար, ո՛չ ներկայ, ո՛չ ապագայ, բայց զգում է երիտասարդութեան սիրտը,

17 ԹԱՄՐԱԶԵԱՆ, ՀՐ., ԵՐԿԵՐ, Խ. Ա., 780:

որ արշալոյսի ժամն է, որ մօտ է տաք ու պայծառ օրը...»¹⁸: **Բարիկադներում** էին շատերը, իսկ նրանցից երիտասարդ հրապարակագիր Ստեփան Ռուկանեանը (Ռուկան) եւ տաղանդաշատ Յովսէփ Շիշմանեանը (Շերենց) Փարիզում ցոյցի էին դուրս եկել ուսանողութեան ճետ՝ յանուն իտալիայի ազատագրութեան:

Այդ ամէնին անտարբեր չէր նաեւ Վենետիկի Ռաֆայէլեան վարժարանի տեսուչ Ղեւոնդ Ալիշանը, որը քաղաքի հրապարակ-ներում տեսնում էր նոր կեանքի համար պայքարի ելած բոցավառուած մարդկանց: Ալիշանի կենսագիր Հայր Սիմոն Երեմեանն այդ օրերի եւ նոր բանաստեղծի մասին գրում է. «Հայրունիին ամենեն վառ, յուզող ու մոնղող քնարը հնչեցուցեր է Վենետիկոյ քաղաքական եռ ու զեռ խուժանի մէջ շառաչող, սրավեցնող, հրացայտ երգերու արձագանգներէն եկելիտրացած: Վենետիկոյ բռնուած յեղափոխութեան ատեն, կարելի չէր որ Հ. Ալիշանի դիւրավառ ոգին չյուզուեր եւ չերգեր իր աւերակները եւ իր դիւցազները... նա միեւնոյն ատեն կը գտնուեր Քաղքին կեդրոնը, այն պալատին մէջ, որուն առջեւէ՝ հազարաւոր կոնդոլաւորներ յեղափոխական խուժանի հետ, կը հընչեցնեն ազատութեան երգեր:

... Հայր Ալիշանի ընկերուած, կալանաւորուած կուրծքը կը բարիե, նա կը գոռայ իր կրակոտ Բամ, փորոտան...»¹⁹:

* * *

ԺԹ. դարի 50-60-ականների հայ պօէզիան ընդհանրապէս աչքի է ընկնում հայրենասիրական շեշտերով, քաղաքացիական կրքով ու պաթոսով, հրապարակախօսական չնչով: Ազգային երգի ստեղծման կարեւոր գործին իրենց աննախադէպ նպաստներն էին բերում Ղեւոնդ Ալիշանը, Սիքայէլ Նալբանդեանը, Մկրտիչ Պէշիկթաշլեանը, Ռափայէլ Պատկանեանը, Սմբատ Շահազիզը: Նոր գրականութեան ստեղծման արշալոյսին, եթէ բացառութիւն անեսք «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի» վէպը, յատկապէս ընդգծում է քնարերգութիւնը՝ անշուշտ իր ներգործութեան անմիջական ուժի շնորհիւ, որը դառնում է հոգեւոր պայքարի հզօր գէնք: Շուտով Զարթօնքի սերնդի մաքառման ազդեցիկ հիմներ պիտի դառնային «յաւերծ պանդուխտ» Հ. Ալիշանի «Բամ. փորութիւնի դառնային պանդուխտ»:

18 Լի՛թ, Ռուսահայոց գրականութեան պատմութիւն, Վենետիկ 1904, 17:

19 ԵՐԵՄԵԱՆ, Հ. Ա., Կենսագրութիւն Հ. Ալիշանի, Վենետիկ 1902, 112:

տանը», *Միք.* Նալբանդեանի «Ազատութիւնը», *Հ. Սըւաճեանի* «Արիմ Հայկազունքը»։ Գուցէ եւ առաջին հայեացքից տարօրինակ թուայ, բայց ազգային երգի ստեղծմանը կարեւոր լիցքեր էին հաղորդում արովեանական տարելրը եւ առաջին հերթին «Վերք Հայաստանի...» վէպը, որը ձեռագիր վիճակում տարածուել էր ուսանողութեան վշաններում՝ առաջացնելով անօրինակ ոգեւորութիւն։ 1841-ին գրուած հէնց այդ վէպում էր, որ *Մ.* Խորենացուց յետոյ նոր շրջանում առաջին անգամ բացառիկ արուեստով յայտնաբերուած էին Հայաստանի կերպարը, հայոց կեանքը, «Էն ժամանակուայ մեր հալը», ոգին, բարքերը, բորբոքուած էր ազգային հպարտութեան թեման, եւ մատնանշուած էր հայրենիքի պահպանութեան գլխաւոր մայրուղին՝ սրբազն սէր ու անձնագոհութիւն Հայաստան աշխարհի նկատմամբ։ «Շունչդ տու'ր, հոգի'դ, բա'յց քո Հայրենիք մի՛ տար թշնամնաց...»։

«Քազմավէպ»ի 1847-ի յունիսի համարում «նահապես» ստորագրութեամբ տպագրուում է խիստ ուշագրաւ մի աշխարհաբար բանաստեղծութիւն՝ «Հայոց աշխարհիկ» վերնագրով, որի փոքրիկ ծանօթագրութեան մէջ գրուած էր. «Թէպէսնև աս հայոց դաշտերուն Վիրգիլիոսը կամ Հոմերոսն ալ իր բախտին պես անծանօք քողեր է իր կեանքն ալ, բայց անոր պատուական յիշատակները՝ այսինքն երգերեն մէկ քանին բախտով մեզի հասան մօսերս հին տաղարաններու եւ ոսկեփորիկներու մէջ քաղուած, ուրիշ խառն երգերու եւ ուամկալան ոտանաւորներու հետ... Կ'նրենայ թէ աս նահապետը քանի մը դար առաջ Շահարքասին ժամանակները Հայաստան մնացող ազգայիններեն եղած է»²⁰։ Հարց է ծագում՝ ի՞նչն էր ստիպել *Ալիշանին* նման քայլի դիմելու, այսինքն՝ աշխարհաբարով գրուած իր գրական երախայրիքը վերագրելու որպէս ԺԶ. դարի վերջի եւ յաջորդ դարի սկզբներին ստեղծագործած մէկ ուրիշի երկ։

Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերյիշել, որ ԺՅ. դարի առաջին կէսին չարունակւում էր գրաբարի ու աշխարհաբարի շուրջ ծայր առած բանավէճը, իսկ այդ բանավէճում յատկապէս աչքի էին ընկնում *Միհիթարեանները*, որոնք նախանձելի եռանդով ու յամառութեամբ պաշտպանում էին գրաբարի դատը. գրում, թարգմանում եւ գործում էին գրաբարով, իրենց տպագիր օրգանում զարգացնում էին այն տեսակէտը, թէ հայ ժողովրդի միակ լեզուն պէտք է լինի «վսմական գրաբարը»։ *Միհ-*

20 «Քազմավէպ», 1847, թիւ 12, 187:

բանութեան աւագ սերնդի ներկայացուցիչները՝ Աւգերեանը, Թովմանեանը, Զախարիեանը, Բագրատունին, որոնք կրթուել, դաստիարակուել ու ստեղծագործում էին գրաբարով, դրա ամենաջերմ պաշտպանողներն էին, եւ համանալի է, որ «Բազմավէպ»ի էջերում նոր տպագրուել սկսող 27-ամեայ Ալիշանին վերոյիշեալ պայմաններում գրեթէ անհնար կը լինէր միանգամից ու կտրուկ հակադրուել միաբանութեան ներսում տիրապետող ոգուն, անառարկելի հեղինակութիւն վայելող հայրերի տեսակիտին եւ հանդէս գալ աշխարհաբարով։ Ահա դա էր պատճառը, որ Ալիշանը դիմել է յիշեալ հնարանքին²¹։ Եթէ իր ստեղծագործութեան վաղ շրջանում նա դեռ գրում էր այսպիսի գժուարամարս գրաբարով, որ առանց լուրջ ճիգերի ու բառարանի անկարելի էր ամբողջապէս հասկանալ, ապա իր ստեղծագործութեան երկրորդ շրջանից սկսած՝ սկսում է գրել աշխարհաբարով, որը թէեւ զերծ չէր գրաբարեան բառերից ու ոճերից, սակայն անհամեմատ աւելի մատչելի էր։ Բանաստեղծը կարողացաւ հասկանալ, որ ժողովրդի հետ խօսելու համար անհրաժեշտ էր գրել «ուամկօրէնով», թէեւ այդ լեզուի նկատմամբ նա մինչեւ իր կեանքի վերջն էլ առանձնապէս դրական վերաբերմունք չունէր։ «Եւս առաւել,- իր մի գործի կապակցութեամբ գրում էր նա յետագայում,- որ մեր ուամկական լեզուով խօսած եմ, որ թէեւ ֆեզի աւելի դիրքահասկանալի ու ախորժելի է Հայկակ, բայց... ինձի, իմ զգացմանս՝ արդարեւ այս աշխարհիկ լեզուով շատ պտտիկ, շատ ցած, շատ անբնական եկած է. այնպէս կ'սրեսի ինձի, թէ մէջը կրակ մը փուտած քուրչերով ծրաբել կ'ուզեմ, եւ այն իմ իին եւ սրբազն հայրենեացս հրեղէն յիշատակները այսպիսի ինենուկ լեզուով կ'աւանդեմ, քողելով իր կանոնական գրոց լեզուն»²²։ Աշխարհաբարի հանդէպ այսպիսի վերաբերմունք ունեցող Ալիշանը, այնուամենայնիւ, իր ընտիր գործերը գրեց այդ լեզուով, որով պարզորոշ ցոյց տուեց ճիշտ կողմնորոշումը լեզուի հարցում։ Հայ-

21 Ի դեպ, հայ գրականութիւնից յայտնի են համանման դէպքեր. Օրինակ՝ Ռ. Պատկանեանը, երբ 1862-ին գրում է «Օտար օրիորդ եւ հայ պատաճի» քանաստեղծութիւնը, որը լոյս է տեսնում նոյն քուականին «Կոռումի հայոց աշխարհին» ամսագրի 5-րդ բուռմ, դրան կցում է մի փոքրիկ ծանօթագրութիւն՝ նշելով, որ այդ անպահոյն, ընդհանուր առմամբ թոյլ ու բանաստեղծական արուեստից զուրկ գործն ինքը գտել է բոլորվին պատահար ինվցիլ մի լին երիտասարդից գնուած իին, անբուական ու անհեղինակ մի ձեռագիր տաղարանի մէջ։

22 Յուշիկք հայրենեաց հայոց, Վենետիկ 1869, 19:

րենիքի հանդէպ ունեցած սիրով ու քնքշութեամբ լի ջերմ սրտի տրոփումն է զգացուում «Նահապետ» ստորագրութիւնը կրող բոլոր գործերում:

Մինչեւ այս բանաստեղծութիւնը եւ առհասարակ «Երգֆ Նահապետի» շարքը բազմաթիւ էին գրաբարալեզու բանաստեղծները՝ Արահամ Աստաբատցի վարդապետը, Կեսարացի Գրիգոր Գապասախալեանը, Վենետիկի Մինիթարեաններից՝ Ղուկաս ինձինեանը, Գաբրիէլ Աւետիքեանը, Մանուէլ Զախշախեանը, Եղիա Թովմանեանը, Արսէն Բագրատունին... Մանուկ Աբեղեանը «Ռուռապահ Տարու հայոց գրականութեան պատմութիւնից (Առաջին երեսնամեակ)» ուսումնասիրութեան մէջ, բարձր գնահատելով հանդերձ այդ գրագէտների վաստակը մեր մշակոյթի պատմութեան մէջ, այնուամենայնիւ, նկատում է, որ նրանց պօէզիան անարիւն է, «զուրկ կենդանի երակից», եւ աւելացնում. «Մինիթարեանների այս մեծ սերնդի մէջ մի տարօրինակ գրական սովորութիւն է եղել. նրանք գուարեացել են ոտքերով ու յանձերով եւ ոտանաւոր գրելով՝ իրար հետ հանաքներ են արել: Զրադուած լինելով ուրիշ գրական ժանր աշխատանքներով՝ բառարան գրելով, քարգմանութիւններ անելով եւ այլն, մէկ մէկ էլ պէտք են զգացել հանգստանալու և իրենց հանգստութիւնը գտնել են քերթողութեան մէջ: Բայց քերթողութեան ի՞նչ տեսակի: Ինչպէս իին աշուղները իրար հետ բառ մտնելիս՝ միմնանց առեղծուածներ էին առաջարկում յանձեր ու ոտքեր տալով, եւ մրցակիցը պէտք է իր ոսխի պատասխանը տար առաջարկուած յանձերով ու ոտքերով, թիշտ նոյն ձեւով իրար հետ մրցում են և Մինիթարեան ընկեր Քերթողները: Իրենց բառով ասեմ, նրանք յօրինում են «րոնայնգ» և «րոնակարգ» ոտանաւորներ»²³: Իսկ նրանցից ակնյայտօրէն տարբերում էր երիտասարդ բանաստեղծը:

Հայրենի եկեղեքի նկատմամբ տածած անսահման սիրով ու ջերմութեամբ են թաթախուած «Երգֆ Նահապետի» շարքի բանաստեղծութիւնները: Անհանգիստ ու սրտմաշուկ կարօտախոն է մորմոքում «Հայոց աշխարհիկ»ում: Մաքի ու երեւակայութեան արտասովոր թուչքով է պատկերում բանաստեղծն իր հայրենիքի շքեղ գարունը, «ի փախ» դարձած սեւ-սեւ ամպերը, նորահարսի պէս զարդարուած լեռներն ու հովիտները, երփնազան ծաղիկներից պսակ կապած կապուտակ սարերը, գետեղերիքին բացուած շուշանները, «կարմրուկ վարդերը».

23 ԱԲԵՂԵԱՆ, Մ., Երկեր, հ. Դ., Երևան 1970, 557:

Հայո՞ց աշխարհիկ, գարունդ է հասել,
Սիա գեղեցիկ գարուն բո եկել.
Ո՞վ դու ի վաղուց մոռցուած հայրենիք,
Ո՞վ դու իմ սըրտիս անմոռաց տեղիք.
Սիա գարունիկդ հասել է, հասել,
Աւագ Մասեաց ծայրն ընդ ֆեզ հաշտ հայել...

Բանաստեղծութիւնը գնալով իմաստաւորւում է, թանձրանում են պատկերները, ծայր է առնում անհուն հայրենասիրութիւնը. Նահապետ «շայիրը»՝ երգիչ-բանաստեղծը, պատգամում է հայ սերունդներին ամուր կառչած մնալ հայրենի եզերքին, չըդառնալ աստանդական ու տարաշխարհիկ. չէ՞ որ «Ծառն արմատով է ծառ, տունն իիմամբ է տուն»: Ի դէպ, Հայոց «միշտ պանդոխտ ալեւոր նահապետի» (Յովհ. Թումանեանի բնորոշումն է) այս յորդոր-պատգամը այսօր էլ իԱ. դարում, մեզ համար հընչում է խիստ արդիական:

Հայրենիքի շքեղ գարնան պէս պանծալի է եղել նաեւ նրա պատմութիւնը. աղեղնաւոր քաջ Հայկի օրերից ի վեր Հայոց աշխարհը շատ կարիճներ է տուել, կործանուել են բազմաթիւ Բէլեր, հայրենիքի սարերը, ձորերն ու դաշտերը «կարմիր են բրտնել», այնտեղ են հասակ առել դիւցազուններ Տիգրանն ու Տրդատը, Վարդանն ու Վահանը, Աշոտն ու Սմբատը: Բայց, աւա՛ղ, անմիխթարելի է հայ հայրենիքի ժամանակակից վիճակը.

Բայց ափսո՞ս իիմա, որ չար թըշնամիք
Խսկի չեն խնայել Հայո՞ց աշխարհիկ,
Եկեղեցիք, վանք, գըրասուն, դարպան
Զարկել են թըրով, հըրով դաս ու դաս.
Զազգի ընչօֆ տեղօֆ բանդել ու գերել,
Դեմ չորս հովերուն տընել ու ցըրուել:

Բանաստեղծ որդին, սակայն, հաւատում է հայրենիքի վերածնութեանը, նոր ծաղկումին. չէ՞ որ հասակ առնող սերնդի առջեւ է հայոց յաւերժ գոյութեան խորհուրդը մարմնաւորող սրբազան լեռը, եւ իր վերջին իղձն է թաղուել «Հայոց աշխարհիկի կակուդ հոդիկում»:

«Երգի նահապետի» շարքի հէնց առաջին բանաստեղծութիւնից նկատելի է, որ այն հերոսական ռոմանտիզմի մեծ բռնկում էր արեւմտահայ պօէզիայի մէջ, որն ունեցաւ ազգային նշանակութիւն: Ալիշանն ապրել է ոգեւորութեան ու վերելքի մի շրջան կապուած ժամանակի մեծ անցքերի հետ: Նա կարողացել է արտայայ-

տել ազգային ռոմանտիկական պօէզիայի բուն գաղափարներն ու ոճական յատկանիշները, հայրենական սէրը, վաղուայ ծրագրերը, որոնց չնորհիւ իմաստաւորուել են հայրենական սերունդների պատմական երթն ու մաքառումները, սկզբնաւորուել է հայոց ըմբուսութեան երգը: Ալիշանի նոր երգերը տոգորուած են նաեւ քնքշագին սիրով, նրանց մէջ վառուում է Հայոց աշխարհիկը՝ հազար գոյներով, բորբոքւում է անքուն ու անհանդիսո կարոտը:

«Հայոց աշխարհիկ»ին գրեթէ հաւասարազօր տրամադրութիւն է արտայայտում «Բազմավէպ»ի 1848-ի օգոստոսեան թւում տպագրուած «Ողբամ զբեզ Հայոց աշխարհ» բանաստեղծութիւնը: Այն եւս գրուած է աշխարհաբարով, որը վկայում է այն մասին, որ երիտասարդ վանականն անվարան շարունակում էր ընթանալ իր իսկ յայտնագործած ուղիով: Միիթարեան գրականութեան համար անընդունելի, բայց ընթերցող լայն շրջաններին չափազանց սրտամօտ այդ հանգամանքը կարեւոր ու բախտորոշ եղաւ նոր քնարերգութեան ակունքները յայտնագործելու ճանապարհին: Ասել է թէ՝ Ալիշանի բերած յաջորդ նորութիւնը, անշուշտ, աշխարհաբարն էր, գրեթէ ստեղծագործական սիրանք: Երիտասարդ բանաստեղծն Աբովիեանի պէս իր հայեացքն ուղղեց դէպի ժողովուրդը, գրեց նրան հասկանալի ու մատչելի լեզուով, ինչպէս ձը. Աճառեանը կասէր՝ «ալիշանեան աշխարհաբարով»: Ճիշտ է, Միք. Նալբանդեանն իրաւացիօրէն կարծում է, որ «Երգք նահապետի» շարքի լեզուի վրայ դեռևս ճնշող է հին լեզուն, բայց եւ այնպէս այդ թերութիւնը գալիս էր Ալիշանի կրօնական պաշտօնից: «Հ. Ղեւոնդ Ալիշանեանց ունի բանաստեղծական քանիքար, եւ այդ քանիքարը կարող էր աւելի պարզ ու վառ երեւել, եթէ արեղայական սեւաքոյր վերաբկուն չլիներ խափանառիք»²⁴:

«Ողբամ զբեզ Հայոց աշխարհ» բանաստեղծութիւնը ձեւի, արտայայտած իմաստի տեսակէտից կարծես «Հայոց աշխարհիկ»ի շարունակութիւնն է կազմում: Քերթողահօր «Ողբ»ի պէս դա եւս մի սրտառուէ ողը է արիւն ու աւեր դարձած Հայաստանի, կործանուած հնութիւնների ու եղծուած գեղեցկութիւնների մասին.

Ողբամ, ողբամ, հազար անգամ ողբամ զբեզ, Հայաստան,
Երբեմըն բիւր փառաց տեղիք, հիմա դամրան.

Քո ծիրանիքըն մերկացան, քո թագդ առաւ,
Արիուքիւնըն հայկական ելաւ թըռաւ:

24 ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Մ., Երկերի լիակատար ժաղ., վեց հատորով, հ. 3, Երեւան 1981, 156:

Ալիշանի այս «Ողբ»ը, սակայն, ամէն ինչ տանուլ տուած, հայրենի երկրի գեղեցիկ գալիքի նկատմամբ հաւատը կորցրած բանաստեղծի լացուկոծ չէ. այն պարունակում է նաեւ բողոքի ու ցաման զգալի տարրեր, որոնք նոր կշիռ են հաղորդում երգին. հեղինակը բանաստեղծութեան վերջում յստակօրէն այն միտքն է զարգացնում, որ թէեւ Հայաստանը գտնւում է կործանման եզրին, այնուամենայնիւ կը գայ ժամանակ, երբ մի ժամանակ «շատ աշխարհաց մայր» Հայաստանը նորից կը դառնայ լոյսի ու գիտութեան օջախ, եւ փոյթ չէ, որ այդ երջանիկ օրը կը լինի Նահապետի կեանքում վերջինը. նա սիրով պատրաստ է «հող մտնել», միայն թէ վերածնուի Հայոց երկիրը:

1848-ի հոկտեմբերեան թւում «Բազմավկէպ»ը հրատարակում է «Հրազդան»ը՝ հայ գրականութեան ամենասիրուած ու տարածուած բանաստեղծութիւններից մէկը՝ պանդիտութեանը նուիրուած ջերմաշունչ մի երգ, որն իր հմայքը պահպանում է նաեւ այսօր: Օտար ափերից տուն է վերազարձել հայորդի Բաբկէնը՝ բռնուած անծայր կարօտի հոգեմաշ զգացումներով.

Հրազդան, գետակդ. իմ հայրենի,
Հրազդան, զըրիկդ. իմ անուշիկ,
Ահա թողել զոհողն օտարի,
Բարկէնս հասել եմ պանդիխտիկ.
Ա՛յ Հրազդան, ա՛յ շուրք հայրենիք,
Ա՛յ ափունք, ե՞ր կու լայք լըռիկ:

Հարազատ գետի ափերին նա փնտրում է իրենց կանաչ անտառիկը, սիրելի տաղաւարիկն ու այգին, սիրած աղջկան՝ «Աչիցըս լոյս Խանոսուկին», հարազատ մարդկանց... Լուռ է, սակայն, հայրենի գետակը, լուկ արտասուում են նրա երբեմնի զուարթ ափերը՝ թողնելով հայ պանդիտին իր անամոք վշտի հետ միայնակ.

Ա՛հ, անցուգնաց կեկ ամէն.
Ա՛հ, անցուգնաց է Հայաստան.
Զիս անմենկիկ թողած աստէն՝
Հետ անցնիս գնաս դու՛ն այլ
Հրազդան...
Անցի գընայ չըկիդ հայրենի,
Արտսունք հերիք են Բարկէնի:

«Հրազդան»ը ուղենչային եղաւ հայ նոր քնարերգութեան համար. այդ բանաստեղծութեան ազդեցութիւնը, յատկապէս ձեւը՝

դիմառնութեան եղանակը, ակներեւ են թէ' Պատկանեանի «Արաքսի արտասուբը»ի եւ թէ' Ռաֆֆու «Ձա՛յն տուր, ով ծովակ»ի վրայ:

Հայրենի եզերքի մի նրբին գովք է նաեւ «Հայ հայրենիք» բանաստեղծութիւնը, ուր հեղինակը մի առանձին սիրով ու քնչութեամբ է պատկերում Հայկական լեռնաշխարհի արեւագալը, աստուածազրդը, դրախտային ջրերը, դրանց ամէն կաթիլից ծնուռը աստղիկները, ծլարձակող ծաղիկները...

Ա՛յ դրախտի ջրեր, իջէ՛ք, իջէ՛ք

Չերկիրն հայոց արքեցուցէք.

Ահա վտակումք կըրկըջային,

Զորն ու հովիտ արքենային,

Յամէն կարէն աստղիկ ելնէր,

Ամէն ծընէն ծաղիկ ծընէր:

Ինչպէս նկատելի է, բանաստեղծը միջնադարեան տաղերգունքին բնորոշ քնչութեամբ ու գունագեղութեամբ է երգում բնաշխարհի գեղեցկութիւնները:

Հայրենիքի անհուն սէրը, կարօտն ու ջերմութիւնն աստիճանաբար ստեղծում են մի նոր միջնոլորտ նաեւ գալիքի պայծառ երազների ու մաքառումների համար: Դիպուկ է Աւ. Իսահակեանի նկատումը, թէ Ալիշանի «Գլուխը հինգերորդ դարում է»: Բայց անցեալի այդ հայեացքը կամրջող էր. դա հայեացք էր դէպի գալիք, ինչպէս եղ Զարենցը կ'ասէր՝ «Աչերս յառել եմ անցեալին՝ ապագայի նժոյզը նստած»: Եւ հէնց «Մասիսու սարերն» բանաստեղծութեան մէջ եւ «Պլպուլն Աւարայրի» պօչմում Ալիշանը, կարծես մի կողմ թողած Միք. Նալբանդեանի մատնանշած «արենայական սեւաբոյր վերարկուն», այդ անցեալից համարձակ լրս է նետում գալիքի վրայ:

«Վերջին երգ վիրաւոր բամբոահարին» բանաստեղծութեան մէջ վերարտադրուած են Հայրենիքի ազատութեան համար մղուած պայքարում կարեէցը ընկած զինուոր բամբուահարի կեանքի վերջին վայրկեանները: Անվեհեր Հայրենասէրների հետ միասին ուազմի սուրբ դաշտն է իջել նաեւ բամբուահար Փառէնը՝ յաղթանակի անսասան վճռականութեամբ, մարտնչել է քաջաբար, սակայն մահացու վէրը է ստացել: Հայրենիքի գալիքի համար նահատակութիւնը, սակայն, հերոսութիւն է. մահը ծաղրելու համար պէտք է զոհուել երգը, շուրթերին:

Վերոյիշեալ բանաստեղծութիւնը մի անհրաժեշտ աստիճան էր, որին պիտի յաջորդէր մի ուրիշը՝ նշանաւոր «Մասիսու սարերն»ը:

«Մասիսու սարերն» բանաստեղծութեան մէջ վիճում են Մեծ եւ Փոքր Մասիսները, ըստ որում նրանցից իւրաքանչիւրին հեղինակը կերպաւորել է իւրովի: Մեծ Մասիսը յանդուգն է, համարձակ. նրա խօսքերում առկայ են հպարտութեան ու ինքնավստահութեան ուժեղ շեշտեր: Փոքր Մասիսը, ընդհակառակը, հեգնող է, կապահոտ, կշտամբանքով է վերաբերեւում տեղի ունեցող դէպերին, քննադատում է անդամ «աւագ եղոր» ասածները: Վիճելով Մեծ Մասիսի հետ՝ նա յոռետեսօրէն ասում է.

Զի հիմիկ փոխուել է հայոց երկիր,
Թէ փառք, թէ պարծանք անցել են, գնացել,
Քո բարձր գլխեղ ի վայր են սահել:

Մեծ Մասիսն արժանապատուօրէն ու աներկիւղ պատասխանում է Փոքրին, պատասխան, որը խիստ յատկանչական է Ալիշանին բնորոշելու համար, այն է՝ թէեւ հայոց գլխին եկած բազում դժբախտութիւնները երկիրը ծայրայել ծանր վիճակի մէջ են դրել, բայց այդ ամէնը յաւերժական չէ ու կ'անցնի, քանի որ յարատեւ է հայութիւնը: Ինքը բիբլիական լեռն է եւ ժամանակակիցը նոյին, Աղամին ու Հայկին, լեռ, որն իր ընդերքում հասունացնում է զարհուրելի մի հրաբուխ. այն շուտով պիտի ժայթքի եւ հուր ու կրակ տարածի ամէնուրեք, այրի ու մոխրացնի հայութեան թշնամիներին: Մոլեգնած է Մեծ Մասիսը, եւ նահապետի վերաբերմունքը որոշակիօրէն «զինչ գաղան» լափող սարի կողմն է, որը եւ հեղինակի տրամադրութիւնների արտայատիչն է: Այս տեսանկիւնից նայելով՝ ամբողջ բանաստեղծութեան մէջ խսպառ բացակայում է թափծոտութեան այն ուժեղ շեշտը, որն այնպէս որոշակիօրէն առկայ էր նահապետի նախորդ գործերում: Բանաստեղծութիւնն աւարտում է բնորոշ մի վերջաբանով. երկու սարերի խօսակցութիւնից յետոյ հանդէս է գալիս ինքը՝ նահապետը, որը ոչ միայն չի փորձում որեւէ կերպ մեղմացնել Մեծ Մասիսի մարտաշունչ տրամադրութիւնը, ոչ միայն չի զսպում նրան, այլեւ ուղղակի կոչ է անում է՛լ աւելի մոլեգնել, մըրկել, «ծըլխիկ ծիրանի» արտավիժել: Այլ կերպ ասած՝ Մեծ Մասիսի մէջ խորհրդանշելով հայ ժողովրդին՝ Ալիշանը կոչ է անում չհանդուրժել տիրող լուծը, չուսահատուել անյաջողութիւններից, այլ ոտքի ենել բաղձակի ազատութիւնը նուաճելու, հայրենի երկիրը փրկելու համար.

Շարժի՛ր, հա՛ շարժի՛ր Աւագը Մասիս,
Արձան պարծանաց հայոց աշխարհին,

Ծընչէ, հա՛ շընչէ ծըխիկ ծիրանի
Որ քո մանկըտեաց յուսոյ նշան լինի...
Ահա շարժեցաւ Աւագըն Մասիս
Արձան պարծանաց հայոց աշխարհիս.
Ահա շարժեցան դաշտ Արարատայ,
Դու՛ք այլ շարժեցէք, մանկըտիք Հայկայ:

Առանձնապէս ուժգին է բանաստեղծութեան վերջին քառասորդը, ուր հեղինակը «Հայ մանկտի»ներին կոռուի յորդոր կարդալուց յետոյ, հայրենիքի ազատութեան սիրով բորբոքուած եւ թշնամուն ջախջախելու անխախտ վճռականութեամբ լի, ինքն է համարձակօրէն նետուում պայքարի՝ կոչ անելով հետեւել իրեն Մասիս գնալու համար, այսինքն՝ մեծ շարժմանը միանալու է գնումնաեւում: «Ճեր նահապէտը»:

Ինչպէս տեսնում ենք, Ալիշանի երգերը ռոմանտիզմի մեծ բռնկում էին արեւմտահայ քնարերգութեան մէջ եւ ունեցան ազգային նշանակութիւն:

Ալիշանի յաջորդ՝ «Աշոտ Երկաք ի ծովուն Սեւանայ» բանաստեղծութիւնը եւս արտայայտում է հայրենասիրական ջերմին տրամադրութիւններ: Յայտնի է, որ հայ գրականութիւնը հիւսել է բազմաթիւ էջեր, որոնք վերաբերում են ժ. դարի Բագրատունեաց քաջարի արքային՝ Աշոտ Երկաթին: «Ով ասես որ չի գրել Աշոտ Երկաքի մասին, - այս առիթով նկատել է ակադ. Ա. Տէրսէրեանը, - բայց այդ պատմական անձի երկաք լինելը, այսինքն՝ հերոս լինելը, միայն կարողացել է ցոյց տալ Ալիշանը: Նոյնիսկ Մուրացանի պէս մի արտակարգ տաղանդ մասամբ աչքաբող է արել Աշոտի երկարութիւնը եւ նրան դարձրել դարավերջիկ սենտիմենտալիստ»²⁵: Յիրաւի, ակամայ յիշում ես Մուրացանի գլուխգործոց երկի՝ «Գերգ Մարզպանունի» վէպի կենտրոնական հերոսներից մէկին՝ Աշոտ Երկաթին՝ ընկճուած, երկրի քաղաքական գործերից հետ քաշուած, աւելին՝ սիրուց բգկտուած խեղճուկրակ մի հակ, որը պատրաստ է երկմինի աստղերը կողոպսելու՝ վարձահատոյց լինելու համար այն մարդուն», որը մոռանալ կը տայ իրեն իր անցեալը... եւ ցաւալիօրէն պիտի արձանագրել, որ Մուրացանի «Չնորիիւ», աւելի ճիշտ՝ պատճառով, հայ սերունդների գիտակցութեան մէջ ու մտապատկերում խրոխտ արքան արդէն հարիւր տարուց աւելի այդպէս էլ քանդակուած է՝ խեղճ, նոյնիսկ ողորմելի... Մեզ բնաւ իրաւունք

25 ՏԵՐՏԵՐԵԱՆ, Ա., Հայ կյասիկներ, Երևան 1944, 55:

չվերապահելով՝ դոյզն-ինչ նսեմացնելու Մուրացանի նշանաւոր պատմավէպը (այն արուեստի գլուխգործոց է, որը յատկապէս փայլում է հերոսների խոր հոգեբանութեան ու հակոտնեայ զգացմունքների բացառիկ ուժի վերհանումներով), այնուամենայնիւ, չենք կարող չնկատել, որ Մուրացանն այդտեղ նկատելիօրէն հեռացել է պատմականութիւնից ու, մեղմ ասած, դրսեւորել անարդար վերաբերմունք:

Բայց ահա Ալիշանը՝ իր բանաստեղծութեան մէջ նկարագրելով Աշոտ Երկաթի հերոսական ու հայրենասիրական գործունէութիւնը (յանկարծակի յարձակում թշնամու վրայ, վերջինիս տրուած ջարդը Սեւանի ափին, թշնամու խուճապահար փախուստը՝՝ նա կարողացել է բացայայտել քաջասիրտ Երկաթ-արքայի ճշմարտացի կերպարը: Այն աւելի շօշափելի է դառնում, երբ բանաստեղծը նրան պատկերում է զինուորների միջավայրում խրախոյս կարդալիս:

1858-ի «Բազմավէպ»ի ապրիլեան թւում հրատարակուած «Լուսնկայն գերեզմանաց հայոց» բանաստեղծութեան մէջ, սակայն, նախկինում մարտ ու մրրիկ երգող Ալիշանը հակում է դէպի յոռեստեսութիւնը. նա սկսում է մի սրտակեղեք ողբ աւերուած եղերքի ու նրա առաթուր յուշարձանների շուրջ: Բանաստեղծը հայոց անցեալի փառքից իր ապրած ներկայ շըջան է կանչում Հայկին, Արամին, Տիգրանին՝ այս անդամ արդէն ոչ թէ հայրենասիրութիւն սերմանելու, այլ ողբակցելու իրեն:

Ալիշանը 1863-ին գրում է «Հայ հանճար» բանաստեղծութիւնը: Նկատենք, որ այն գրելուց մէկ տարի առաջ՝ 1862-ին, տեղի էր ունեցել Զէյթունի նշանաւոր հերոսամարտը, որն անսահման ոգեւորութեամբ էր համակել ամբողջ հայութեանը: Եւ բանաստեղծութեան մէջ որոշակիօրէն նկատելի են հէնց այդ տրամադրութիւնները: Օտար ափերից շնորհաշատ բանաստեղծն ի լուր ամէնքի տարփողում է, որ թէեւ Հայաստան աշխարհն այժմ զրկուել է իր նախկին հզօրութիւնից, այնուամենայնիւ այն մոխրակոյտ չէ եւ ոչ էլ անապատ.

Հայաստան անկեր,
Բայց ո՞չ է անցեր:

Բանաստեղծութեան վերջում Ալիշանը դառնում է հայ հայրենիքի այն նոյն կրակուած ու հայրենասէր զաւակը, որպիսին էր 1849-ին:

* * *

1847 թուականի «Բազմավէպ»ի հոկտեմբերեան թւում հրատարակում է Ալիշանի՝ «Նահապետ» ստորագրութիւնը կրող գլուխդործոցներից մէկը՝ «Պլառլն Աւարայրի» պօէմը։ Նշանաւոր պօէմում եւս բանաստեղծը, վերակենդանացնելով հայ ժողովրդի եւ դարի պատմական անցեալի հերոսական դրուագները, ամբողջ հիւսուածքում հայրենասիրութեան ազնիւ հրդեհներ է բորբոքում հայ սերունդների սրտերում։

«Երգի նահապետի» շարքին պատկանող միւս գործերի նըման «Պլառլն Աւարայրի»-ն եւս սկսում ու աւարտում է խօսակցութեամբ՝ այն տարբերութեամբ միայն, որ հեղինակը սկըզբում դիմում է լուսնեակին, իսկ վերջում կրուից յետոյ՝ սոխակին։ Պօէմի սկզբում դիմառնութեան եղանակով դիմելով լուսնին՝ բանաստեղծը քնարական տրամադրութեամբ գրում է.

Ո՞նց գաս իմ լուսնակ հեզիկ ու հանդարտ
Համասիիւր լուսովի ի լեռ, ձոր եւ արտ,
Եւ նահապետս, որ մըտօք մոլար
Գիշերածամիկ ծուռ գամ յԱւարայր,
Ուր ժաշ ու անենման հարք մեր հայկագունք
Ընկան զէտ հսկայ, կանգնեցան զուարքուն։

Հեղինակն այնուհետեւ նոյն եղանակով դիմում է Տղմուտգետին («Դու այլ, ո՞վ Տրդմուտ, տրտում ու արիւնուտ...»), յետոյ՝ սոխակին («Ո՞հ, դու բարեկամ այրած սրտերու...»)։ Յետոյ ծայր է առնում խոչը 451-ին տեղի ունեցած Աւարայրի ճակատամարտի եւ նրա հերոսի մասին։ Սոխակը, որին նա դիմում է, Եղիշէ պատմէն է՝ Վարդանանց հերոսամարտի երդիչ։

Պօէմն սկսում է Աւարայրի դաշտի նկարագրութեամբ։ Ճակատամարտի նախընթաց գիշերը խաղաղ է, բայց այդ անդորրութիւնը խաբուսիկ է։ Երկու բանակներն էլ տենդագին պատրաստում են ահեղ օրուայ բախտորոշ ճակատամարտին։ Ալիշանը հայոց եւ պարսից բանակները պատկերել է լոյսի ու ստուերի հակադրութեամբ։ Եթէ առաջինը ողողուած է լուսնի լոյսով, ապա երկրորդը՝ սեւ ամպի ծածկոյթով։ Իսկ դա խորհրդանշական է։ բանաստեղծը խորհրդանշել է երկու հակոտնեայ ուժերի՝ պատութեան ու բռնութեան բախտումը՝ ընդգծելով Աւարայրի դաշտում հայոց մղած ոգորումի ազատագրական բնոյթը։

Գիշերային համատարած անդորրութեան մէջ արթուն է միայն վարդան Մամիկոնեանը, որը, «ծայրախաչ նիգակը թեւի

տակն առած», զրջում է վրանից վրան ու հսկում իր զինուորների գիշերային հանգիստը: Ահեղ ճակատամարտի նախօրեակին նա մտքում մի անգամ եւս կշռադատում է իրադրութիւնը, կռահում նենգ ոսոխի հնարաւոր բոլոր խորամանկութիւնները՝ նրան արժանի հակահարուած տալու համար: Այդպէս է արել քաջ սպարապետը՝ յիսուն ճակատամարտեր շահելու իր հարուստ փորձից ելնելով, եւ այդպէս է անում այժմ՝ մտազբաղ ճեմելով համակ քուն մտած հայոց ուազմանակատով: Բանաստեղծը պօչմի այդ հատուածում կարողացել է հասնել այն բանին, որ առերեւոյթ հանդարտութեան մէջ ստեղծուի հոգեբանական զգալի լարում, յուղումնալից վիճակ: Այստեղ արդէն բացակայում է պօչմի սկզբնամասի ջերմ քնարականութիւնը:

Բացւում է յաջորդ՝ արիւնալի օրը: Աւարայրի դաշտավայրում արիւնը հոսում է Տղմուտ գետի պէս: Ընկնում են պարսիկները, ընկնում են հայերը՝ քաջազուներ Գարեգինն ու Ռոստոմը, Վուամիկն ու Արշաւրը, Արտակը, Խորէնը, շատերը... Արիւնոտ այդ պայքարում ընկածներին ու ընկնողներին նկարագրելով՝ նահապետը մրմնջում է.

Վասըն քո ընկան, աշխա՛րի իմ Հայոց,
Կըտրիթ անելմանէ, վեհի հիւսիսայնոց:

Ընկնում է նաեւ հայոց սպարապետը, բայց հայ ժողովրդի մաքառումները շարունակում են տարիներ, դարեր... եւ յաւերժանում է հայոց սպարապետը.

Կանչէ՛ պըլապուլիկ, կանչէ՛ հոգեհայն,
Որ երկնուց ի վայր հայի եւ Վարդան,
Յիշէ զհայսատան տուն իւր սիրական,
Հայաստան յիշէ զիւր Կարմիր Վարդան:

Աշխարհաբար պօչմների ասպարէզում «Պապուլն Աւարայրի»ից գրեթէ տասը տարուայ ընդմիջուումից յետոյ՝ 1857-ին, Ալիշանը գրում է իր վերջին՝ «Ծուշանն Շաւարշանայ» պօչմը, որը, ինչպէս հաւասարում է Հայր Ս. Երեմեանը, բանաստեղծի ամենասիրած գործն էր: Վանական միջավայրը բնականաբար չէր կարող իր կնիքը չդնել Ալիշանի աշխարհայեացքի վրայ, եւ վերոյիշեալ պօչմը չեղինակի կրօնամիսատիկ զգացումների գրական արտայայտութիւնն է, եթէ կարելի է այսպէս ասել՝ մի ճօն քրիստոնէական հաւատի համար՝ նահատակուած ու սրբացուած կոյսին:

Գաղափարական տեսակէտից որոշ խոցելի կողմեր ունենալով հանդերձ պօչմի գրական-գեղարուեստական արժանիքները, սա-

կայն, անժխտելի են: Թերեւս ուրիշ ոչ մի գործում գեղեցիկ պատկերների, բնորոշ ու յաջող համեմատութիւնների, ճոխ ու ճկուն նկարագրութիւնների այնպիսի առատութեան չես հանդիպի, ինչպէս յիշեալ պօէմում: Եւ այդ ամէնը՝ գեղարուեստական բարձր ճաշակի տեղին ու համաչափ պահպանմամբ: Այս տեսակէտից առանձնապէս յաջող է տրուած «նազելի արքայադատրիկ» Սանդուխտի նկարագրը.

Քանց զարուսեակ պսպըզուն
ի մէջ մանտրիկ ամպերուն,
Քանց վարդալոյս արեւակ
ի խնծորի տերեւակ,
Քանց Երասխայ նունուֆար
Գլխիկն ի ցող շարուշար,
Քանց զամենն ա'յլ գեղեցիկ
նազի Սանդուխտըն բամբշիկ:

Սանդուխտի կողքին ոչ պակաս յաջողութեամբ պատկերուած է նրա հայրը՝ Սանատրուկ արքան, որը, իմանալով աղջրկայ վճիռը եւ սարսափելով գրանից, սկզբում փորձում է համոզել դստերը: Նա աղջկան խոստանում է ամէն ինչ՝ հարստութիւն, փառք, իշխանութիւն, խոստանում է անկարելին, սակայն Սանդուխտն անդրդուելի է: Դա կատաղեցնում է հօրը: Ալիշանը կարողացել է գեղարուեստական ուժեղ չեշտերով նկարագրել մոլեգնած արքային, որը լսելով աղջկայ մերժումը՝

Փերք մի փըրքաւ ի սըրտեն
Եւ հեռացաւ Սանդըխտէն.
Կանչեց նըման առիւծու
Երդուաւ լուսնի ու արեւու
Զէտ ըզկայծակ սեւ ամպուն
Բերմէն փըչեց բօք մահուն:

Արքայի հրամանից յետոյ Սանդուխտին պէտք է սպանեն: Բոլոր ներկաները՝ մեծ թէ փոքր, կին թէ տղամարդ, լալիս են լուռ ու անսփոփի: Գեղեցկուհու մահն էլ պատկերուած է գեղարուեստական մեծ վարպետութեամբ:

Կարմիր կաթէր ի կըրծքէն
Վարդեր բուսան չօքք դիէն...

Ամփոփելով Ալիշանի անցած ամբողջ գրական ուղին՝ այն կարելի է ներկայացնել այսպիսի մի նախադասութեամբ՝ նա սկսեց որպէս Մխիթարեան, զարգացաւ որպէս Նահապետ եւ աւարտեց

որպէս Հայր Ղեւոնդ: «Նոնիի նման ուղղաքնք ու նուրբ հասակը, հերապանծ գլուխն ու ապողոնեան ճակատը, խոշորագեղ ու անուշահյեաց աչքերը՝ Մելպոմենէական անուշ տիբրութեամբ մէկ կողմէն եւ միւս կողմէն ալ անմեղութեան ժպիտովն, - իբրեւ լուսասառուերներով, - օժտուած դէմքը, ինչպէս նաեւ խոկումնալից եւ զգացումներու մէջ ընկդմած լուութիւնը, այլովք հանդերձ, կը յօրինէին քուն քանաստեղծի դիմագծութիւնը, ներքին ու արտաքին տրամադրութիւնները» (*Բարսեղ Մարգիսեան*)²⁶, - այսպիսին մնաց Ալիշանը ժամանակակիցների ու յաջորդների յիշողութեան մէջ: Նրա մասին այսպիսի եւ է՛լ աւելի ջերմ տողեր են գրել Արփիար Արփիարեանը, Գրիգոր Արծրունին, Դանիէլ Վարուժանը, Արշակ Զօպանեանը եւ այլք:

Յետագյում էլ, ուրիշ առիթով անդրադառնալով Ալիշանին, Նալբանդեանը ոչ միայն կրկնեց իր գնահատականն առանց որեւէ վերապահութեան, այլև ընդգծուած դրուատանքով արտայայտուեց նրա աշխարհիկ պօչդիայի մասին: «Այս արժանապատիւ անձը, - գրում էր նա, - ծանօթ է հայոց ազգին մանաւանդ նահապեսի անունով: Նորա «Աւագ եւ Փոքր Մասիս», «Հայոց աշխարհիկ», «Պլպուլն Աւարայրի» տաղեգութիւնները ջերմացուցեր են շատ սրտեր նահապեսի անունի վերայ»²⁷: Ալիշանի քնարերգութեան նկատմամբ Նալբանդեանի սէրը վառ է արտայայտուել նաեւ «Կրիտիկայում...». «Զենք մոռացած «Նահապես» ստորագրութեամբ Հ. Ղեւոնդ Ալիշանեանց արժանաւոր վարդապետի հրատարակած հոյակապ ժերթուածքը - «Պլպուլն Աւարայրի», «Հայոց աշխարհիկ» եւ միւս բոլոր աշխարհաբար ոտանաւորքը, բայց այստեղ չիշեցինք, որովհետեւ արձակ բանաստեղծութեան վերայ էր մեր խօսքը, ապա թէ ոչ, չափարեական ժերթուածոց մէջ արժանաւոր վարդապետը ախոյեան չունի, եթէ մենք լունք, Աւարայրի բլրուլը կը խօսի»²⁸:

«Մի զրվէծ է Ալիշան, - նրա մասին գրում է Ա. Արփիարեանը, - որ ոռնալով ժայուն ի վար կնետուի, փրփուր եւ կոհակ կը ժայթքէ դէպի երկին եւ ֆարերը ծեծելով, խուրերու վրայէ ցայթքելով կը վագէ ահեղամուսնչ, կարծես մի յախտենական խոչընդոտի դէմ կոռուելով, մոլեգնելով, աղմկելով բարձր են ի վար կոստնու, աւելի վեր բռչելու համար»²⁹: Նոյն արեւմտահայ երեւելի գրագէտն այ-

26 «Ալիշանը ժամանակակիցների յուշերում», 160:

27 ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Մ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան 1979, 430:

28 Անդ, հ. 4, 1983, 170:

29 «Ալիշանը ժամանակակիցների յուշերում», 9:

Նուհետեւ յիշում է, որ Ալիշանը «մեր պատանեկութեան օրերու ամենէն մեծ հրճուանքն է, մեր տեսուչն է, որ ոչ միայն մեծ հայրենասէր մը է, մեծ միտք մը, այլ նաեւ մեծ սուրբ մը»^{30:} Կամ «Հ. Ալիշան Ս. Ղազարու ոգին է»^{31:}

Լինք Ալիշանի ժամանակակիցներին՝

Նիկողայոս Քարամեան - «Հայր Ղեւոնդը կենդանի եւ լուսացահ է ամբողջ միարանութեան համար: Նրա աշխատասիրութիւնը, հանճարը, համեստութիւնը, բարեբարոյ վարքն, գիտութիւնն ու հռչակը խթան է ամէն մի երիտասարդ վարդապետի համար... Նա օրինակ է քէ' մեծերին, քէ' փոքրերին»^{32:}

Թաղեւոս Թոոմանան - «Հայր Ալիշանի գրական հսկայ գործութեանը արդիւնք է հիանալի կարողութեան եւ բնատուր ձիրքերու, որոնցմով օժտուած էր մանկութեան ի վեր: Ան ուներ ամենասուր միտք եւ անվրէպ յիշողութիւն... Ան բանաստեղծ ծնած էր, բառին ամենալիակատար իմաստովը, բարձր եւ լուսաշռող, նման հսկայազօր Մեծ Գիսաւորներու՝ որոնք դարերու ընթացքին հազիւերքի կունսուին: Այսպիսի մեծ միտք մը սահմանափակ երկրի մը համար չէ անջուշու: Իսկ երէ Հայաստանը նախընտրեց աւելի ու գոռացուց Բամբինը փառագոչ, պատճառը անօրինակ հայրենասիրութիւնն էր... Մահու չափ կ'ատէր ինքնահաւանանութիւնը ու կը փախչէր անկէ, ինչպէս օճէ մը»^{33:}

Տիգրան Նազարեան - «Խրիմեան Հայրիկ եւ Հայր Ղեւոնդ Ալիշան՝ մի-մի պայծառ, կենսարար, բուժիչ ու սննդարար նառագայրներ եղած են, համայն հայութեան սիրու-հոգի-միտք-զգացում դաստիարակող, կոռոյ կոփողներ... Յաւերժ պայծառ դարեր Ս. Ղազարի գիտնական կանառին»^{34:}

Ցովհաննէս Թորոսեան - «Անմեղ, սիրուն, երջանիկ կեանք մ'անցունելով՝ մեր նահապետը մինչեւ վերջին օրը բռաւ երկինք, կտակելով մեզ իրեն առաքինութեան օրինակները, իրեն հոգին, եւ ազգին՝ իրեն ստուար հատորները»^{35:}

30 ԳԱՐԱՄԱՃԵԱՆ, Մ., Հատրնիք հատուածք, Պոլիս 1903, 28:

31 «Ալիշանը ժամանակակիցների յուշերում», 77:

32 Անդ, 39-40:

33 Անդ, 185, 193:

34 Անդ, 163:

35 Անդ, 138:

Հայր Սիմոն Երեմեան - «Մենասէր հոգին մենաւոր մնաց, յուղարկաւորները գացին հեռացան. տխուր է'ր օդը, տխուր եւ օրը. վերահաս գիշերը հասաւ ցուրտ ու մոնչող հողմով. յիշեց լուսնակը Նահապետին այն պատուէրը, զոր տուած էր իրեն հայոց գերեզմաններին: Պատուեց ամպերը, վանեց խաւարը, բայց քամին սեւ ամպերը կը մղէր, կու գային անոնք զինքը թաղելու. որոտաց ձայն մը մեր գերեզմանէն. կա'ց, մէկ վայրկեան մ'ալ կա'ց իմ լուսնակ, հոս հար մը կայ ծանօթ Նահապետին, եկուր հոս կաթէ լոյսիդ արտասուիք, Նահապետին է այս գերեզման...»³⁶:

Այսպէս, ահա, առանձնացած Վենետիկի Ս. Ղազար կղզում՝ հայոց տաղանդաշատ Նահապետը անդուլ տքնանքով կազմակերպում էր հայրենի ժողովրդի հոգեւոր լիցքերը, նոր հորիզոններ բացում ազգային երգի գալիքի համար: Նրա քնարերգութեան լաւագոյն մասը հիւսուեց ջահէլ օրերին, մտքի ամենաերեւակայելի սլացքների ու պայծառ տեսիլքների բովում եւ դարձաւ հայ սերունդների հոգու ազնիւ բաղադրիչներից մէկը:

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐԵԱՆ

Summary

FR. GHEVOND ALISHAN: THE MAN AND THE POET

ALBERT MAKARYAN

KEY WORDS: Ghevond Alishan; Mkhitarians of Venice; romanticism; lyric poetry; ashkharabar (Modern Armenian language); national song, “Songs of Nahapet”; poem; contemporaries; memoirs.

The speech is dedicated to the 200th anniversary of the Armenian outstanding poet and scientist Ghevond Alishan. The author has mainly set forth two aims: first, he introduces the high moral posture, warm patriotism, boundless diligence and extreme modesty of “Armenian Nahapet” and then points out the ideological and artistic merits of his collection “Songs of Nahapet”, that has played an exceptional role in the creation of Armenian national song of 50-60s of 19th century. Other issues related to the theme and the assessments of the famous people are also taken into consideration.